

ԴԱՍԱԿԱՆ ՊԱՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՍԱՏԻԿ
ԹԱՏՐՈՆԻ ԱՊԱԳԱ ԴԵՐԱՍԱՆԻ ՀԱՄԱՐ

Ապագա դերասանի, մաս ռեժիսորի կայացման գործընթացում կարևորագույն և հիմնարար դեր է խաղում պար առարկայի ուսուցումն ու ուսումնասիրումը, որը նպաստում է ոչ միայն բեմում բարեկիրք կեցվածքով ու վայելուչ պահվածքով ներկայանալուն, այլև համակարգում է երաժշտության ռիթմին ու տեմպին համա-պատասխան շարժումները, ընդլայնում կերպարային և պատկերավոր մտածողության սահմանները, զարգացնում հոգեբանական բացահայտումներ կատարելու կարողությունները: Պարը կերտում է ոչ միայն ապագա դերասանի մարմինը, այլև հոգին, ստեղծելով համաչափությունների սիմֆոնիա: Այս բոլորին նպաստում է դասընթացներում օգտագործվող երաժշտական նյութը, որը օգնում է պարերի ռիթմիկ կատարմանը, ձևավորում է ապագա դերասանի երաժշտական ճաշակը, զարգացնում նրա կատարողական վարպետությունը:

Հենածողի մոտ կատարվող պարային վարժանքների համար ընտրված են դասական երաժշտության այնպիսի հատվածներ, որոնք օրգանապես ձուլվում են կատարվող պարի շարժումներին և այնպիսի համաչափություն են ստեղծում, որն հաղթահարում է նյութի յուրացնումն ու կատարողական բարդությունները:

Պատմական տարբեր դարաշրջաններ ներկայացնող երաժշտության ընտրությունը ուսանողին օգնում է ճիշտ պատկերացում կազմելու ոչ միայն ներկայացվող դարաշրջանների պարային ոճերի, կեցվածքների, շարժումների ճկունության, այլև պարը ներկայացնողի հոգեբանության, մարդկային փոփոխարարելությունների, զգեստների, կոշիկների և այլ համամասնությունների մասին: Անհրաժեշտ է ժողովրդական պարեր ուսուցանելիս ընտրել տարբեր ժողովուրդների պարերի երաժշտական նմուշներ, որոնք կընդլայնեն ուսանողի իմացության շրջանը, նրան ծանոթացնելով աշխարհի ժողովուրդների պարային մշակույթին և նրանց կատարողական արվեստի առանձնահատկություններին:

Դերասանական արվեստի խորապես տիրապետելու և ներդաշնակ զարգանալու համար կարևորագույն նշանակություն ունի պար առարկայի ուսուցումը թատերական ուսումնական բոլոր հաստատություններում: Պարը վերակերտում է ապագա դերասանի մարմինը, շարժումների ճկունությունը,

համաչափություն է հաղորդում, միաժամանակ զարգացնում է մկանային ողջ համակարգը, նպաստում բեմական բարետես կեցվածքի ձևավորմանը:

Պարը օգնում է նաև ճիշտ պատկերացում կազմելու և ճշմարիտ վերարտադրելու տարբեր դարաշրջաններում ապրած մարդկանց վարվելակերպը, կեցվածքը, որոնք նրան օգնում են թափանցելու և բացահայտելու իր մարմնավորած հերոսների հոգեկան աշխարհը՝ ստեղծելով նրանց գեղարվեստական համոզիչ և լիարյուն կերպարները: Պարուսույց դասախոսի գլխավոր խնդիրն է, դասական պարի բաղադրամասերի ուսուցման միջոցով, ուսանողին ծանոթացնել ոչ միայն պարային շարժումներին, կեցվածքներին, այլև տարբեր դարաշրջանների գեղագիտական, էթիկական նորմերին, նրան մասնակից դարձնելով յուրաքանչյուր շարժման կերտմանը՝ ստեղծելով կերպարային մտածողության կենդանի վերարտադրություն:

Դասավանդման ողջ ընթացքում կարևոր է նաև ուսանողի մեջ սեր առաջացնել պարի նկատմամբ, նրա հոգեկան և գիտակցական աշխարհը համակել այն մտայնությամբ, որ պարը կարևոր նշանակություն ունի իր ընտրած մասնագիտության համար:

Պարը համադրական արվեստ է: Նա իր մեջ ներառում է տարբեր շարժումների համակարգեր, կերպարանավորված, իմաստավորված և երաժշտականացված կեցվածքների միասնություն, որը խորապես արտահայտում է մարդկային հոգեկան աշխարհի ամենամուրբ և ամենաբարդ զգացումներն ու խոհերը: Պարային շարժումների միջոցով մարդկային բարդագույն հոգեվիճակներն արտահայտելու համար կարևորագույն նշանակություն ունի դասական պարի վարժանքների և վարժությունների կատարումը հենաձողի մոտ: Հենաձողի մոտ է դրվում ապագա բարդ շարժումների ու կեցվածքների հիմքերը, այդ իմաստով, պարուսույց դասախոսը անվերապահորեն պիտի պահպանի դասական պարի բոլոր բաղադրամասերը, որոնց յուրացման դեպքում միայն ուսանողը կարող է հասնել ցանկացած արդյունքի: Սակայն դա չի նշանակում, որ փնտրուքներ չպետք է կատարել:

Անշուշտ պետք է հաշվի առնել ժամանակի թելադրանքը, հետևել նորածնություններին, ժամանակակից ու մոդեռն պարային բոլոր ուղղություններին, բայց այդ բոլոր նորածնությունները պիտի կառուցվեն դասական հիմքի վրա: Զանի - որ դասական պարի բաղադրամասերը, թե մոդեռն, թե ազգագրական, թե ժողովրդական պարերի այբուբենն են:

Այդ իմաստով հենաձողի մոտ, ուսանողը, անվերապահորեն պետք է յուրացնի ու տիրապետի դասական պարի բոլոր բաղադրամասերն ու նրբերանգները, որոնք ամրացնում են նրա ողնաշարն ու պահպանում կեցվածքը: Կարևոր նշանակություն ունի նաև հենաձողի մոտ ձեռքերի ու ոտքերի ճիշտ դրվածքի

պահպանումը, որոնք հետագայում նպաստում են տարբեր դարաշրջանների և տարբեր բնույթի և ոճերի պարերին կերպարային մտածողություն հաղորդել: Այս նրբություններն անտեսելու դեպքում, երբեմն, բենի վրա, ձեռքերը դառնում են ոչինչ չարտահայտող, անիմաստ տարուբերվող, դերասանին խանգարող ատրիբուտներ: Մինչդեռ, հենածողի մոտ, զուգահեռաբար ձեռքերի փոխանցումն ու միացումը ոտքերի շարժմանը նպաստում է շարժումների համաչափություն ստեղծելուն: Պարի յուրաքանչյուր դաս պետք է ունենա իր ներքին կառուցվածքը, որպեսզի այն զեղծ մնա միապաղաղությունից և միօրինակությունից, հատկապես հենածողի մոտ կատարվող վարժանքների և վարժությունների հերթականության ժամանակ: Բոլոր վարժություններն ու վարժանքները ուսանողը պետք է կատարի ոչ թե մեխանիկորեն, այլ գիտակցաբար և ամբողջությամբ ներգրավելով կատարվող շարժումների էության մեջ:

Հենածողի մոտ կատարվող վարժանքներն ու վարժությունները չպետք է անցնեն 10 - 15 րոպեի սահմանը: Սկանային ծանրաբեռնվածությունն ու լարվածությունը պետք է ավելացնել աստիճանաբար՝ ողջ դասաժամի ընթացքում:

Պարային շարժումներն ամբողջությամբ ընկալելու և ճիշտ կատարելու համար, ուսանողը պետք է տեսնի և սովորի նաև դասընկերոջ սխալները նկատելու միջոցով:

Բոլոր պարապմունքների ժամանակ էական նշանակություն ունի երաժշտության ճիշտ ընտրությունը: Վարժություններն ու վարժանքները կատարելիս, ուսանողն ամենայն ուշադրությամբ պետք է հետևի և ունկնդրի երաժշտությունը, ենթարկվի նրա ներքին տրամաբանությանը, տեսնի ու ճիշդին, որը հնարավորություն կընդձեռնի շարժումները կատարել երաժշտությանը համահունչ և միածույլ: Երաժշտության ճիշտ ընկալումը, նրան համահունչ և միածույլ վարժանքներ ու վարժություններ կատարելը ընդհանուր մեթոդական նշանակություն ունեն ապագա դերասանի մտածողության ձևավորման վրա:

Վարժություններ ու վարժանքներ կատարելիս կարևոր նշանակություն ունի ճիշտ տեմպ ընտրելը: Նույն շարժումները սկզբում կարելի է կատարել դանդաղ, հետագայում աստիճանաբար ավելացնելով տեմպը, այն հասցնելով համապատասխան մակարդակի: Վարժությունների ու վարժանքների տեմպից է կախված շնչառության կարգավորումը, որը նպաստում է նաև ապագա դերասանի խոսքի համատեղումն ու համապատասխանեցնելը ցանկացած շարժման տեմպին ու ճիշդին:

1. Առաջին կիսամյակում, հենածողի մոտ կատարվող բոլոր վարժանքներն ու վարժությունները կատարել դեմքով հենածողին:

2. Երկրորդ կիսամյակում՝ /մոտ երկու ամիս/ ձախ ձեռքով բռնել հենածողը, աջ ձեռքը նախապատրաստական դիրքից տանել ետ՝ հենելով գոտկատեղին՝ ուղղելով կեցվածքը: Նույնը կատարել աջ ձեռքով:

3. Առաջին և երկրորդ կուրսերում հենածողի մոտ կատարվող վարժանքներն ու վարժությունները պետք է սկսել չորս տակտի նախաբանով, իսկ երրորդ և չորրորդ կուրսերում՝ երկու տակտով, որը բնականորեն, տոնայնությամբ ու չափով կապվում է հիմնական երաժշտական նյութի հետ:

Վարժանքների ու վարժությունների վերջում՝ ձեռքի վերադարձը ելման դիրք, պետք է ուղեկցվի երկտակտ երաժշտական կառուցվածքով:

4. Ձեռքերի դիրքերը յուրացնելիս, հաշվի առնելով երկրորդ դիրքի բարդությունը այն ցույց տալ նախապատրաստական առաջին և երրորդ դիրքերից հետո:

5. Առաջին կիսամյակում՝ դեմքով հենածողին նախքան վարժանքները կատարելը, ձեռքերը պահել նախապատրաստական դիրքում, որը զարգացնում է հավասարակշռության և իրանի դիրքի ճիշտ պահպանումը:

6. Ոտքերի հինգ դիրքերը յուրացնելուց և ամրապնդելուց հետո, հաշվի առնելով չորրորդ դիրքի կատարման բարդությունը և ուսանողների ֆիզիկական հնարավորությունները, սահմանափակ քանակությամբ այն ներմուծել վարժանքների և վարժությունների մեջ:

7. Ուսուցման ողջ ընթացքում, որպես օժանդակ վարժանքներ կարելի է կատարել գլխի պտույտներ:

8. Սեկ ձեռքով աշխատելիս՝ հենածող բռնող ձեռքը, պետք է ազատ լինի՝ արմունկը ցած իջեցրած, իսկ դաստակը՝ հենածողի վրա՝ իրանից փոքր ինչ առաջ:

9. Ուշադիր պետք է լինել, որպեսզի ձեռքը վեր բարձրացնելիս, այն շարժվի ուսից անկախ, այսինքն՝ ուսը, ձեռքի հետ չմեկնվի առաջ և վեր չբարձրանա ուսի հետ:

Հենածողի մոտ վարժանքներ ու վարժություններ կատարելիս միօրինակություններից խուսափելու համար, հայտարարել ընդմիջում, որը օգտագործել պարասրահի կենտրոնում, ուսանողներին, Պոլկա պարի տարրերի պարբերական համա-կարգերը ուսուցանելով:

10. Սկզբնական շրջանում, թռիչքներ կատարելիս, դեմքով դառնալ հենածողին երկու ձեռքով բռնել այն /ոտքերը պետք է լինեն առաջին դիրքում/, այնուհետև, մի քանի դասից հետո, մոր միայն անդրադառնալ երկրորդ և հինգերորդ դիրքերին: Երաժշտական չափը պետք է լինի 4/4: Սեկ շարժումը կատարվում է մեկ տակտի ընթացքում:

Առաջի տակտի, առաջինից ութերորդին անցնելիս կատարել

demi plie - դրմի պլիե - կես ծնկածալում:

Երկրորդ և երրորդին՝ թռիչքից հետո՝ demi plie

Երրորդ և չորրորդ քարտողներին ձգվել plie - ով և դադար:

Նույնը կատարել պարասրահի կենտրոնում՝ աստիճանաբար ավելացնելով տեմպը:

1. Գտնում ենք demi plie - և Grand plie - և

/Grand plie - զոան ալիե - մեծ ծնկածալում/ պետք է կատարել 3/4- ում, ձգելով ծնկածալման տևողությունը, որը նպաստում է մկանի շարժման նկունությանը:

2. Rond de jambe par terre – ր / ոոն դո ժամբ պարտեր - ոտքով շրջան գետնի մոտ/ 3/4- ում ավելի սահուն և արտահայտիչ է դարձնում ոտքի շրջագծով շարժումը հատակի վրա:

3. Battement frappe’-ն/ բատտման ֆրապան - հարվածել/ 2/4-ում շատ ծիգ և սլացիկ է ստացվում և միաժամանակ օգնում է, որ վերջնաշարժումը ավելի ցայտուն կատարել:

4. Battement fondu –ն/ բատտման ֆոնդու – համաժ. հոսող/ պատակահարմար է կատարել 3/4-ում: Արտահայտչականությունը, արտիստիզմը ու երևակայությունը զարգացնելու համար, վարժանքներից ու վարժություններից զատ, ինքնուրույն բեմադրությունների համար, կարելի է առաջարկել նաև պարզունակ էտյուդներ:

Դասը սկսել և ավարտել խոնարհումներով՝ համապատասխան երաժշտության ուղեկցությամբ:

Ժամանակակից թատերական բեմադրություններում, որևէ պարի բեմադրությունը, որպես օրենք, իրականացնում է պարարվեստի ռեժիսորը, սակայն նա պետք է համակերպվի տվյալ թատերերգությունը բեմադրող ռեժիսորի պահանջներին և միաժամանակ հենվի այն դերակատարների ունակությունների և կարողությունների վրա, ովքեր կատարում են այդ պարերը: Ուրեմն ուսումնառության ժամանակ, պար առարկայի յուրացումից և ուսումնասիրությունից է կախված տվյալ պարը կատարող դերասանի վարպետության չափանիշը: Եթե ուսումնառության ընթացքում տվյալ դերասանը լրջությամբ և գիտակցորեն է մոտեցել պար առարկայի ուսումնասիրման և ուսուցման ողջ ընթացքին, ապա նա կկարողանա հաղթահարել իր առջև դրված խնդիրն ու հասնել ցանկալի արդյունքի: